ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2120-Ա « 22 » ապրիլի 2026թ.

Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ Հ.103/4 ԵՎ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ Հ.101/2 ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Վահե Հարությունյանի դիմումը՝ Փ.Բուզանդի փողոց հ.103/4 և Փ.Բուզանդի փողոց հ.101/2 ավտոտնակների զբաղեցրած հողամասերի համար համապատասխանաբար՝ 25.01.1999 թվականին կնքված հ.ՓԲ-1576 06/1778 և 25.01.1999 թվականին կնքված հ.ՓԲ-1590 06/1803 վարձակալության պայմանագրերը լուծելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով և հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի՝ Կոստան Պողոսյան Սամվելի (որակավորման վկայական հ.0439, տրված՝ 04.03.2022թ.) կողմից տրված 30.03.2026թ եզրակացությունները՝ վարձակալության իրավունքով պատկանող հողամասերում առկա շինություններն ապամոնտաժված են.

1.Լիազորել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ի հետ կնքել համաձայնագրեր՝ Փ.Բուզանդի փողոց հ.103/4 ավտոտնակի 30,87քմ մակերեսով հողամասի համար 25.01.1999 թվականին կնքված հ.ՓԲ-1576 06/1778 և Փ.Բուզանդի փողոց հ.101/2 ավտոտնակի 24,0քմ մակերեսով հողամասի համար 25.01.1999 թվականին կնքված հ.ՓԲ-1590 06/1803 վարձակալության պայմանագրերը լուծելու մասին՝ կատարելով համապատասխան փոփոխություն գույքի վարձակալության բազայում:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրի իրավունքի դադարումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ